



Ռ. ԱՂԱԲԱԲ



19 ՍԱԲԼԵՏԻԱՄԻ 48



ԳՆԱՆՈՒՄ ԺԵՐԵՆԻ


Արտ. Լ. Կարկայանին

խոսքեր

Թիֆլիս. 9. IX. 1949



ԳՆԱՆՈՒՄ ԺԵՐԵՆԻ



ԳՆԱՆՈՒՄ ԺԵՐԵՆԻ



Գ Ն Ա Ն Ո Ւ Մ Ժ Ե Ր Ե Ն Ի

რუბენ ალაბაბი



წიგნაკი

კრებული



საბლიჭბამი



19 თ ბ ი ლ ი ს ი 48

ՌՈՒԲԵՆ ԱՂԱԲԱԲ

2250



ԺՈՂՈՎԱԾՈՒ



114 / 444

ՍԱԲԼԻՏԳԱՄԻ



49

ԹԻԼԻՍԻ


48



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՊՐԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ԱՅՏՈՒՄ

ՓՈՒԿԱԿՆԵՐ



Պատասխանատու
Խմբագիր՝
Լ. ՄԵԼԻՔՅԱՆ-ԲԵԿ

ԵՐԵՎԱՆ 1924

ԱՅԳ ՍՈՎԵՏԱԿԱՆ

Օրը՝ որպէս հաղթանակող՝
Բարձրացել է երկրի վրեժ,
Արեգակը հուր ճառագող
Կարծես վահան լինի նրբա:

Նրբա առջև լեռները վես՝
Զյունազագաթ ու բարձրաբերձ՝
Կըռվում պարտված հըսկայի պես
Յած են դրբել գըլուխն իրենց:

Փոշու նրման անթափանցիկ՝
Կըռվի պահին վեր ամբարձող՝
Բարձրանում է նրբա ճամբից
Մըշուշը խիտ, մեզն ամպացող:

Լույս է սըփռում ամենուրեք
Նրբա վահանն ադամանդէ.
Ո՛չ մի պատնէշ, ո՛չ մի արգելք
Չեն դիմանա նրբա հանդէպ:

ԱՅԳԸ ԾՈՎ ԱՓԻՆ

Ահա Սև ծովն իր ալեկոծով,
Ու ես կանգնած եմ նրբա ափին.
Հառնում է վեր իր ահեղ բոցով
Ալեծածան այս հրսկա արփին:

Հրսկա արփին այս հառնում է վեր,
Բացվում է օրը, ամենուրեք
Ուրվազգծվում են հորիզոններ.
Հեռվում—հովկասը ձյունազրմբեթ:

Իմ հայրենի այս ջրերի մոտ,
Իմ հայրենի այս արևի սակ
Թընդում է սիրտն իմ մի նոր խինդով,
Առնում է լիցք նոր, անհուն, անտակ:

1941
Բաթումի

ԿԱՆԱԶ ԼԵՌԱՆ

ԻՄ ՓՈՔՐԻԿ ԼԵՌՆԻԿԻՆ

Քինջ, համապիտու

Մեղմիկ գեփյու

Կանաչ լեռան.

Կաթնափրփուր,

Քաղցրիկ աղբյուր

Կանաչ լեռան.

Դնւ խատուտայ

Կարմիր կակաչ

Կանաչ լեռան.

Մուգ կապուտակ

Անդորր լըճակ

Կանաչ լեռան.

Ծիրանափոր

Բորբ առավոտ

Կանաչ լեռան.

Դեմքըս շոյոյ

Առաջին շոյ

Կանաչ լեռան.

Քո աչերում
Մոզն եմ տեսնում
Կանաչ լեռան.
Քո համբույրում
Բույրն եմ ըզգում
Կանաչ լեռան:

1945
Սեփան

ԱՅԳԱԲԱՑԻ ԵՐԳԸ

Ա.

Պիշեր է սաթ,
Աստղերն արծաթ
Երկնի ծովում
Կարծես լողում.
Ակն ու վրտակ
Թըփերի տակ
Խոխոջում են
Ու կարկաչում.
Հովը թեթև
Քընքուշ եթերն
Ակոսում է,
Կամ խոսում է
Ալեկոծով.
Իսկ սար ու ձոր
Կարծես անքուն
Արձաղանքում:

Բ.

... Ու երբ արփին
 Սյգաբացին
 Կատարները
 Սեգ ծառերի
 Նախշի զառով
 Երգով, խաղով,
 Ողջուն կրտա
 Կիրճն այս հրակա:
 Կիրճն այս հրակա,
 Կիրճն այս չըքնադ
 Ժիր - կենդանի
 Քվաբլիանի¹,
 Որ Գողերձի²
 Ձյունե բերդից
 Ըսկիզբն առած
 Վազում է ցած:

Գ.

Իսկ բլլուրին
 Մամոտ ու հին
 Վանքն է իշխում:
 Մարդ չի հիշում,
 Թե քանի դար

¹ Գետ Մեսիսթում:

² Գողերձի - լեռ, հայտնի է Գողերձի լեռնանցքը:

Կանգուն է, կա,
Որպես կոթող,
Որպես բեկոր
Հին արվեստի—
Շինարվեստի,
Բլրբին բազմած
Վանքն այս Չարզմա¹,
Հեքյաթային
Մեծ Շոթայի
Երկրում այս վեհ
Կոչված Մեսխեթ:

Դ.


... Եվ էս սարի
Ձիգ կատարից
Դիտում եմ ցած—
Գորգ է փրուած
Կարծես նախշուն
Հեռու դաշտում
Համայնական,
Ու դյուրթական
Մի անուշ երգ
Հրնչում է մեղմ.

¹ Չարզմա— վրացական պատմական ճարտարապետության կոթող.
Տիմուրիդան ճիշտ տարեթիվը հայտնի չէ—մոտավորապես X դար:

Հայրենիքիս՝
Աշխատանքի
Հերոս մարդու
Երգն է ազդու
Այնտեղ հրնչում
Անեզր դաշտում:

1935

Ախալցխի





Զ Ե Զ

Փիժաղաշատ բալիկներ,
Մեր ծաղկոցի սանիկներ,
Ձեզ համար ես ես փրնջել
էս երգերը՝ ձեզ նրվեր:

Եկեք նրստենք ծալպատակ
էս թըթենու հովի տակ.
Ու էս ուրախ ժամանցին
էսօր լինենք միասին:

1945

ԾԻԾԵՌՆԱԿԻ ԲՈՒՅՆՆ ԱՌԱՋՆՈՐԴԻ
ՏԱՆ ԿՏ ԻՐԻ ՏԱԿ
(Ըստ վրացերենի)

Շողշողում են դուռ ու դարպաս,
Տունն ու կրտուրն ալ-շողերով.
Զարդարվել են բակն ու պարտեզ
Ալվան-ալվան ծաղիկներով:

Գարունն եկավ, գարունն եկավ,
Խաս ու զըմբուխս փարչա հագած,
Սարույն եկան, ձորույն եկան -
Ծիծառները թեվատարած:

Ու ճախրեցին օդումն արձակ՝
Ծիծառները ճըռվողեցին,
Այտեզ, այս տան կրտուրի տակ
Անկյուն զըտան, բույն շինեցին:

Բացվեց նորից մեզմ առավոտ
Նախշ-նրկարով ըսքանչելի,
Ծիծառները նոր բընի մոտ
Երգ ասացին ձագուկներին:

Ձագուկները նրբանց՝ շուտով
Այս նոր բրնից դուրս կը թըռչեն,
Թեպիւն կըտան նրբանք փութով
Ինչն սարի ետև մինչև:

Համբավ տարեք դուք, ծիծառներ,
Որ էս հարկի տակ մեծացավ
Պայծառադեմ մանուկը մեր՝
Գարթլի որդին դյուցազն դարձավ:

Այստեղ խաղաց ու լույս տոնչաց
Փառքը երկրի, միտքը դարի
Ու նրբա հետ մեկտեղ շողաց
Արեֆն այս մեծ՝ փիրուզ սարից:

Այստեղ ահա ունկընդրեց նա
Նորեկ գարնան խաղ ու երգին,
Գարնան սըփուած շողին արվան
Ծիծառների զիլ համերգին:

1940

Գ ո Ր Ի


2. Ռ. Աղաբաբ - «Այգ»



ԻՄ ԼԱՎ ԲԱԼԻԿ

Յո՛ւմ լավ բալիկ,
Անու՛շ Ալիկ,
Այտի՛դ վըրա
ժըպտի ալիք,
Ա՛ռ ինձանից
Երկու հատ թև,
Դարձի՛ր թիթեռ
Դու մի թեթև,
Թըռի՛ր ինձ մոտ
Վարդ իմ հոտոտ:

1940



Հ Ա Յ Ր Ե Ն Ա Կ Ա Ն

«... Մեր բազմաթիվ գյուղերում Հայ-
րենական Մեծ Պատերազմի օրերին կոլ-
խոզնիկուհիները սոցմրցութուն էին ծա-
վալել սովետական զինվորներին բողբ առջ
հագուստով ապահովելու համար»:

Չյունապըսակ ու բարձրաբերձ
Լեռնաշխարհի՝ ազատատենչ
Աշխատավոր ժողովըրդիս
Արժանավոր, ազիզ որդիս՝

Կարմիր զինվոր, ես քեզ զուրբան,
Քեզ համար եմ էս զույգ գուլպան
Հյուսել բըրդի թելից տաքուկ՝
Չյունից սպիտակ, ձյունից փափուկ:

Որ դու հագնես ու ջերմ ըզգաս,
Որ դու լինես առույգ, ըզգաստ,
Որ դու լինես հաղթող, արի՛
Կուռըզ լինի քաջավարի:

Թըշնամու դեմ անեղ մարտում
Դավթի նըման լինես հատու,
Կամքըդ լինի գոռ, հաստատուն,
Որպես հերոս միայն՝ գաս տուն:

Էս է միակ բաղձանքը իմ
Բաղձանքը մոր, դու, իմ անգին.
Ղուրբան լինեմ ձեզ, իմ բալեք,
Դեհ շուտ հաղթեք, շուտ ետ դառեք:

1942

ԱՇՈՒՆՆ ԱՆՏԱՌՈՒՄ

Նախշ ու նրկար,
Աշնան անտառ,
Կարմրել է հոնիդ ծառը.
Մի տես՝ ինչպես նա պայծառ է,
Բաց-կարմիր է հագել հացին,
Կարմրել մոտ տալիս բացին,
Մոխրագույնով ներկվել կաղնին,
Բոյով բարդին կապել դեղին.
Սպիտակել են դաժին, լորին,
Ու զարդարել էդ բոլորին:
Մըշաագալար ու փառանեղ,
Որպես արթուն ավետաբեր
Կանաչ գարնան նոր բողբոջի
Մեղ է նայում սիրուն սոճին:
Նախշ ու նրկար,
Աշնան անտառ:

ԱՌԱՋԻՆ ՁՅՈՒՆԸ

Ողջ գիշերը
Ձյան հյուսերը
Յած են թափել—

Սուսիկ-փուսիկ,
Ու քընքուշիկ
Սալան կապել—

Դաշտում, սարին,
Թուփ ու ծառի

Հենց կատարին,

Տան կըտուրին,

Ծրտի թառին,

Էդ հերիք չի՝

Դեռ նըկարչի

Ձեռքով հըմուտ

Նախշ են արել

Ու գարգարել

Դուռ-լուսամուտ:

Խաղի ընկեր

Իմ բախիկներ,

Ապա տեսնեմ

Դուք էլ էսպես
Զարդով պես-պես,
Քանի-քանի
Լավ, պիտանի
Նրկար կանեք,
Ձեր դպրոցին
Նրվեր տանեք...

1940


ՍԻՐԵՆՔ ԳԼՐՔԵՐ


Սիրենք երգեր,
Սիրենք մըրգեր,
Ամենից շատ
Սիրենք զըրբեր:

Սիրենք զըրբեր,
Կարդանք զըրբեր,
Գըրբուժ գըրանենք
Փայլուն մըտքեր:

Դառնանք զխառն,
Լինենք աբխուռն,
Առաջ դիմենք
Մենք օրն ի բուն:

1939





ԱՌՍՁԻՆ ԾԱՂԻԿՆԵՐ

Պետ չի հալվել ձյունը վերջին
Տաք արեվի շողի տակ,
Ջրնձադիկը ձյունի միջին
Բացել է թերն ըսպիտակ:
Երբ հալչում է ձյունը վերջին,
Երբ դաշտերն են կանաչում,
Մանուշակը դաշտի միջին
Անուշ բույր է տարածում:
Հալվեց, գընաց ձյունը վերջին,
Եկան ուրախ, ջերմ օրեր,
Անսոսուկը սարի լանջին
Օրորվում է մեղմորեն:
Հովտաշուշանն էլ հոտավետ
Իր աչիկն է բաց անում,
Ու առաջին է դ ձաղկանց հետ,
Տես, բացվում է նոր գարուն:

Մ Ե Ր Ա Յ Գ Ի Ն

Մեր այգին է ծաղկաշատ,
Բերքն ու բարիքն անհատակ,
Այգեպանը բազմաշխատ,
Առատ վաստակն անարատ:

Առվի ջուրը գլլգլլան՝
Փրփուրը քաշած իր վրան
Մարգից-մարդ է միշտ հոսում,
Մարգերի մեջ, ակոսում,
Ծաղկանց հետ է նա խոսում,
Ծաղկանց էսպես է ասում—

— Ծաղիկ,

Ծաղիկ,

այգու բալիկ,

թերրդ բացիր,

պըսուղ դարձիր—

անուշ հյութով,

համեղ հյութով:

ՄԱՅԻՍՅԱՆ ՀԱՆԴԵՍ

Հենց արեփն է մայր մըսնում
Ու գեփյունն է սրվարվում,
Դաշտի միջին խոտերում
Մի հանդես է ըսկըսվում:

Ծղղրիդն առած թայլութակ՝
Զըլած պարի եղանակ,
Ինչքան ուժ կա թեվերում՝
Հա ճըռռում է, ճըռճըռում:

Թե ծաղկանց մեջ, խոտերում,
Թե օդի մեջ, եթերում,
Բըռնած մի մեծ շուրջպարի,
Ճըպուններն են պար գալի:

Բազում շողուն կայծոռիկ,
Զեռքին մի-մի լապտերիկ,
Թըռչկոտում են միասին,
Լույս են տալիս հանդեսին:

Ուրախ հանդես, երգ ու պար,
Մինչ խոր գիշեր անդադար
Զըրընգում է խոտերում,
Ծաղկանց միջին եթերում...

ԼՈՒՍԱՏԸՏԻԿ

— Ինչ սիլ է, ով
 Թըփի թեփին, տերեփում
 Տուն է շինել վերեփում,
 Տան առջեվը պատըղգամբ,
 Թե գիշերը ծըվարի
 Ու լամպիկը չըվառի՝
 Դուք չեք գըտնի հեշտությամբ:
 Լամպը վառած դուրս կըգն,
 Շուրջը առատ լույս կըտա՝
 Ճամբեն գըտնեն ու հյուր գան՝
 Մոտիկ ընկեր, բարեկամ,
 Մըտերիմ ու հարեփան,
 Մեկտեղ անեն խըրախճան,
 Պարեն,
 Երգեն,
 Հիանան,
 Ուրախությամբ
 Լիանան:
 Մինչեվ թըփի վերեփը
 Ծագի կարմիր արեփը:

1940

Մ Ա Յ Ի Ս Յ Ա Ն Ե Ր Գ

(Վ. Մայակովսկուց)

Տես՝ ծառերն են կանաչել,
Մեզ դաշտն է կանչում.
Իաշտի միջին անեղերք
Շըրջում ենք, շըրջում—
եվ մենք,

եվ ես,

եվ դուն:

Իր լըվացքն է դուրս բերել
Գարունը նորեկ,
Արեվի տակ փըռոտել
Ամենուրեք,
Տես՝

դաշտովը մեկ:

Շողշողում է արեգակն
Ամեն տեղ փայլում,

Բարձր բըռնած
ալ զըռշակն
Առաջ ենք քայլում,
քայլում
ու քայլում:

Լըվացվել է զարունքով
Նրկիրը խընդուն,
Քայլում ենք
ողջ օղակով
եվ ուրախ երգում—
եվ մենք,
եվ ես,
եվ դուն:

1936

ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՍԵՐՈՒՆԴ

Երջանիկ ու եռուն,
Հոկտեմբերյան սերունդ,
Փառահեղ մեր այգում
Աչիկներդ եք բացում:
Մեծ արեվի շողով,
Այգաբացի ցողով,
Փարթամորեն աճում,
Անուշ բույր եք տածում,
Բերկրալի ու բեղուն
Հոկտեմբերյան սերունդ,
Ծաղկազարդ ձեր երգով,
Ծաղկահոտ ձեր բերքով,
Հաղթական ձեր երթով
Մեր սրբտերն եք գերում,
Զրվարթուն ու զեղուն
Հոկտեմբերյան սերունդ:

1930

ԼԵՆԻՆՅԱՆ ՊԱՐՏԵՁ

Մանուկները. —

*Մեր պայծառատես
Լենինյան պարտեզ,
Գարնան կանչի հետ
Հյուսիս ենք եկել քեզ:*

Պարտեզ. —

*Սիրուն բալիկներ,
Կըսամ ձեզ նրվեր՝
Նախշուն, հոտավետ
Պես-պես ծաղիկներ:*

Ծաղիկները. —

*Կարմիր վարդերից,
Գարնան զարդերից
Փընջեր կապեցեք
Փարթամ, անթերի:*

Մանուկները. —

*Ծաղկունքով քո լի
Զարդարենք պիտի*

Հուսե քանդակը
Մեր մեծ ԼԵՆԻՆԻ:

Ծաղիկները.—

Մեծ Լենին պապի,
Սիրելի պապի,
Նա ժրպտում է ձեզ
Ժրպիտով անգին:

Մանուկները.—

Նա ասում է մեզ՝
— Անուշ բալիկներ,
Եղեք անվեհեր
Հրգոր սանիկներ:
Միշտ առաջավոր՝
Տանը, դպրոցում,
Միշտ արժանավոր
Կյանքում ու գործում:

1940

ՎՏԱԿՆԵՐԻ ԵՐԳԸ

Որդին ենք մենք հողմերի,

Գարնանային շողերի.

Մենք ձրգառում ենք

Իրար հասնել,

Իրար մըրցել.

Ու գալարուն

Պըտույաներով

Ոլոր,

Մոլոր

Իրար գըրկել,

Սառուցային

Կապանքները

Հալել, խըռկել:

Մենք վագում ենք,

Միանում ենք.

Իրար գըրկում


Լախանում ենք

Եվ ըստիպում

Մեծ գետերին
Դուրս գալ ամից,
Գլխովել թափից,
Անցնել չափից:

Եվ ողողել,
Վազել, երգել,
Թըռչել, կառչել,
Ու կարկաչել...

1027





ՄԱՅԻՍ ԵՆՔ ՄԵՆՔ

(Ք ա յ լ ե ռ զ)

Պայիս ենք մենք,
Մայիս ենք մենք.—

Շարքեր ունենք
Գարնանային
Հեղեղի պես հորդ.

Երգեր ունենք
Գարնանային
Որոտի պես խրոխտ.

Դրոշներ ունենք
Ալ-մայիսյան
Սրեվի պես բորբ.

Կապքեր ունենք
Նոր գարունքի—
Մայիսյան ամպրոպ.
Ու ինչպես որ
Գարնանային
Ուժը հրզոր

Պայքարում է,
Քայքայում է
Ու վերջ տալիս... ձմեռվա հին
Կապանքներին.
Մենք էլ էզպես՝
Գարունքի պես՝
Հաղթ ու խըրոխտ
Ու անհողզող
Դուրս ենք եկել հին կյանքի դեմ
Պայքարելու
Ու վառելու
Սմենուրեք
Մայիսի մեկ...
Գալիս ենք մենք,
Մայիս ենք մենք:

1927

Գ Ա Ր Ն Ա Ն Ը

(Ն. Ա. Նեկրասովից)

Ըրրջում ենք, շրրջում
Ու կանգ ենք առնում,
Միրուն դաշտերի
Տեսքով հրմայվում.
Տեսքով հրմայվում,
Առաջ ենք գընում,
Առաջ ենք գընում
Ու ահանջ գընում
Գարնան շրրերի
Զրվարթ ազմուկին
Նվ արտուաների
Զրրընգուն երգին...

1939

ՄԵՐ ԾԱՂԿՈՑՈՒՄ

Ջան գարուն, գարուն,
Մեր սիրան ես գերում,
Արեւ ես վառում,
Անուշ գեղգեղում,
Ուրախ ենք, գարուն,
Քո՛ մեզ մոտ գալուն:

Ջան մայիս-մայիս,
Հաղթական ամիս,
Ամեն մի գալիս՝
Նոր բույր ես տալիս
Ծաղկունքին պես-պես
Ու բացում հանդես:

Մայիս՝ ծաղկոցում
Քեզնով են շրնչում,
Մանկանց մեջ սիրուն
Քո երգն է հրնչում,
Ծաղկունքի ծոցում
Քո հյութն է լեցուն:

1939

ՓՈՔՐԻԿ ԿՈՆՍՏՐՈՒԿՏՈՐԸ

Մեր Լեմիկը ամբողջ օր
Զունի ազատ ժամանակ,
Գործ է անում՝ կարեվոր,
Կառուցում է սավառնակ:

Թուղթ ու տախտակ, մեխ ու մուրճ,
Էլ ինչ ասես հավաքել
Ու սենյակի անկյունում
Արհեստանոց է սարքել:

Նրկարում է ու կրտրում,
Ամրացնում է ու քանդում,
Գործ է անում ու երգում
Ամբողջ օրը անդադրում:

Երբ մեծանա, անպայման
Պետք է դառնա կոնստրուկտոր,
Որ կառուցի բազմազան
Սավառնակներ նորանոր:

ԽՆԴՈՒԹՅԱՆ ՔԱՅԼԵՐԳ:

Գրված Պատանի Հանդիսատեսի
Թատրոնի համար.

Շեփորները շեփորում են,
Մընձդաները ծիծաղում,
Տըղա-աղջիկ՝ թատրոնում մեր
Երգում, պարում ու խաղում:

Ուրախ կյանքի ծաղիկները վառ
Մեր բոլորիս գիրկը լի,
Նոր արևի շողով պայծառ
Բուրում է միշտ կենսալի:

Արևածուր էդ ծաղկանց հետ
Ու պայքարով հաղթական՝
Մեծ դարուն է ահա բացվել
Հերոսական, մարտական ..

Մի լավ դարուն, հըզոք դարուն—
Կյանքի, գործի և ուսման,
Գեա է դարձել բարակ առուն,
Թափ է առել անսահման:

Ուրախության անմար կայծով,
Երգով, կանչով բերկրալի,
Դեհ, քայլեցեք դեպի թատրոն,
Պատանիներ երջանիկ:

Գ Ն Դ Ա Կ

(Ըստ Ս. Մարտիկի)

Մոմ գույնը գգույն
Գընդակ զընգուն,
Դու անընդհատ
Ո՛ւր ես վագում,
Քո ետեվից
Մարդ չի հասնում,
Չես լրսում ինձ՝
Քեզ եմ ասում:
Երբ քեզ ձեռքով
Զարկում եմ ես,
Ամբողջ թափով
Դու թըռչում ես
Ու միշտ ուժգին,
Միշտ անդադրում,
Դիպչում գետնին,
Վերադառնում:
Բայց այս անգամ
Ընկաք պարտեզ,

Երկու վայրկյան
Կորար անտես:
Մի քիչ հետո
Գլորովեցիր,
Դիպար քարին՝
Մոլորվեցիր,
Կըպար ծառին՝
Օրորվեցիր,
Դիպար պատին,
Ցանկապատին,
Հետո հասար
Բաց դարպասին,
Ու ընթացար
Մայթովը ցած.
Այ քեզ փորձանք,
Էդտեղ հանկարծ
Դեմըդ ելավ
Ավտոն արագ
Ու քեզ առավ
Անիվի տակ:
Եվ ինչ ..
Եվ ինչ...
Դու պայթեցիր,
Պինդ ճայթեցիր:
... Ուրիշ ոչինչ:

1940

ՄԱՆԿԱԿԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻՆ

(Խ ա ղ)

Պճնքը շիկ,
Թոքը լեք,
Գոլորշի
Ու շոգի,
Իր ծոցում
Հուր բոցում
Քարածուխ
Մուր ու ծուխ
Շարունակ
Թիժ կրրակ՝
Շոգեքարչն է շառաչում
Դագա-դոգե,
Դագա-դոգե,
Վագոններն իրար կառչում
Չաքա - չուքի,
Չաքա - չուքի:
Մեր գընացքը սըրընթաց
Երկաթգըծով գըրկաբաց՝
Սըլանում է.

Ինքնավրաստան համարձակ
Ուղիները լայնարձակ
Կըլանում է.

Ո՛ւ - սւ - սւ - ուն
Շողեքարչն է զիլ կանչում,
Ու - սւ - սւ - սւն

Սար ու ձոր արձագանքում:

* * *

Պուրակի մեջ՝ ծառի տակ,
Կայարանում ըսպիտակ
Մեզ են սպասում կաղմ-պատրաստ
Ուշադիր,

Կայարանի հերթապահ
Պըստիկ Պետիկ—դեն ապա՝
Մեր գընացքը սրբընթաց
Ընդունիր:

Հենց մեր գալու ժամանակ
Կայարանում, ծածկի տակ
Մանուկները բովանդակ,
Միասին

Հեռուում են գնացքի
Հանդարտացող ընթացքին,
Դիմավորում հյուրերին
Ցընծագին:

— Բարեվ, Բեթն,

— Բարեվ, Սեթն,

— Բարեւ, Լեմիկ,
— Բարեւ, Լենիկ,
— Բարեւ, բարեւ
Մեր հյուրերին,
Հազար ողջույն
Ձեզ բոլորին:

Ինքը շիկ,
Թոքը՝ լիք,
Գոլորշի—
Ու շողի,
Իր ծոցում
Հուր բոցում
Քարածուխ
Մուր ու ծուխ,
Շարունակ
Թե՛ժ կըրակ՝
Շողեքարն է շառաչում
Դագա - դոգե,
Դագա - դոգե,
Վազոններն իրար կառչում
Չաքա - չուքի,
Չաքա - չուքի:

1940

Պ Ա Ր Ա Շ Յ Ո Ւ Տ

Պաղիկ բացվեց երկնի մովում,
Նա աճում է, փարթամանում,
Փողփողալով ցած է լողում,
Արեվի տակ պայծառանում:

Ռեց հեքյաթի հավերժահարս՝
Կիջնի երկնից ահա, շուտով
Արեվաշող ու ոսկեվարս
Մի նուրբ աղջիկ պարաշյուտով:

Կիջնի գետին ու կրժրպտա,
Նա կրժրպտա պայծառ ու խոր՝
Մաղիկների մի փունջ գրրկած,
Ինքը՝ ծաղիկ արեվածոր:

Ջան, հայրենի մարգագետնի
Տրղա, աղջիկ ջահել—ծաղկունք,
Ծըլեք, բացվեք մեր լախն երկնի
Ծով-կապույտում ջինջ ու անհուն:

1936





ՊԱՏԱՆԻ ՊՈՒՇԿԻՆԸ

(Գետսկոե սերտում¹)

Պախարդական ըստվերում սաղարթախիտ ծառերի,
Պուրակումն այս հրմայիչ, ծառաստանում գեղանի,
Պատվանդանին՝ կառուցած զըրանիտե քարերից—
Նըստարանին բըրոնզե նըստած է մի պատանի:

Նա մըտածկոտ ու անհոգ շըպըրտել է վերարկուն,
Հուզումնալի շարժումով, ներքին ուժովն իր անեղ,
Թիկնել է նա աթոռին, խոհերի մեջ իր անհուն,
Այդ գանգրահեր պատանին, պատանին այդ հանճարեղ:

Հըզորազոր ու բոցոտ, իր աչքերը սեվեռած,
Գիտում է նա հրմայիչ, հայացքով իր դյուլթական,
Ու կարծես թե շուրթերին ըմբոստ խոսքերն իր պահած
Նայում է այդ պատանին զեպի պայծառ ապագան...

1938

¹ Այժմ քաղ. Պուշկին:

* * *

Հովհ. Թումանյանի մահվան
քսանամյակի օրը:

Այցի եկա, ահա, նորից հեքյաթային Լոռվա ձորին,
Ողջույն ձեզ, լյանք, ձյունագլմբեթ ու միգապատ
վիհեր խորին,
Եվ որմնազարդ, դուք, Գուգարքի վեհ կոթողներ
մեծահանճար,
Ձեզ, որ ծընունդ տրվիք նըրան, Թումանյանին
բազմաքանքար:
Մանուկ օրից նա կաթն ըմպեց ձեր փըրփըրադեզ
աղբյուրների,
Անուշ բանքը նա ունկընդրեց հայոց խոսքի ախունքների,
Դեռ պատանի նա դուրս եկավ թասը բըռնած
խմաստության,
Անձեռագործ իր երգերով դուռը բացեց անհունության:
Ժողովրդի ձայնը դարձավ ու ձայն առավ ժողովրդից,
Ժողովուրդը սիրեց նըրան, սիրեց նըրան ամեն դըրկից,
Ու բարձրացրած իր վահանին մըտերմության
երգը նըրա՛,
Կըռվի ելավ ժողովուրդը նեռ թըշնամու զորքի վըրա,
Կըռվի ելավ մեծըն Դավթի Թուր-կայծակին
մերկացըրած,
Կըռվի ելավ ժողովուրդը անեղակամ ու
փառապանծ:

1943

* * *

Ավ. Իսահակյանի ծննդյան
վաթսուներեքամյակին»

Հայոց երգի լյառը ոսկի կընըմանի Արագածին,
Մի գագաթին բազմել է նա՝ մեր Թումանյանն
իբրեւ շարժիվ,
Նըրա կողքին Հովհաննիսյանն առած քընար
վահագնավառ,
Նըրանց դիմաց խորախորհուրդ Տերյանը մեր
ավետարար:
Դու, մեծ գուսան, մեր Ավետիք, դու մեծ վարպետ
շիրակեցի
Ոսկե լեռան գագաթներից մեկը քեզնով պըսակեցիր.
Փընջեր հյուսած Արագածի եղեմական ծաղիկներից,
Մեր բազմատանջ ժողովըրդին քո շողշողուն
երգը բերիր:

ՎԱՐԴԱԳՈՒՅՆ ՔԱՐԸ


(Առաջին շենքին, որի կառուցման մասնակիցն էի)

Ֆնացվում է օրը վարդի նրման,
Գարնան արեվը բուրում է բարկ,
Սըրտիս թերթերը շոյում է տաք,
Ժըպտում ամեն մի քարի վըրս:


Ահա եվ շենքն իմ՝ բետոնակուռ
Պատերի նիստը վարդագույն քար,
Նա բարձրանում է թափով հուժկու,
Ու գեղեցիկ է տեսքը նըրս:

Վարդագույն քար իմ լուսաշաղախ,
Ամեն կըտորըդ, կերարդ բոլոր
Իր հետ բերում է երգը վաղվա
Երջանկությամբ ու խինդով ողող:

1931



ՄԱՏԻ ՄՈՇՄԵՐ
ԱԻ
ՇԻՆԹՆԵՐ



ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ՇՔԵՐԹ

— Գարիկ պոեմ —

Չըմեռ պապին
Իր ահագին
Ծանրը քոչով,
Սառուցային
Երկար պոչով
Մի առավոտ՝
Հուսածեզին՝
Հենված իրեն
Ձեռնափետին,
Դաշտ ու անտառ
Ետև թողած՝
Ելավ գընաց:
Սարի ուսից օրեր
Դրրկեց իրեն բարեր, —
Ձրրընգացին
առվակները,
Ձիլ թընգացին
ձորակները:

Գարնան կարոտ
Դաշտ ու անտառ
Արտ ու արոտ
Շողեր ստացան,
Ըզզաստացան:
Մի առավոտ,
Լուսաբացին,
Դաշտի միջին
Մի կոչնագիր
Դըրոշմեցին,
Թե պատրաստվեք
շուտով,
փութով
Ոտքի ելեք,
Դաշտը եկեք,
Գարնանային
Ուրախ տոնը
Դիմավորենք:
Կոչնագիրը կարդացին,
Մեկտեղ գործի ղեմեցին՝
Թիթեռնիկը
Նըկարչի մոտ՝
Իր թեվերը
Նախշել տըվեց,
Իսկ գորտ քեռին
Ներկարարին՝
Մեջքը կանաչ
Ներկել տըվեց:

Մեր մըկնիկը
Բըժըշկի մոտ՝
Ատամները
Սըրել ավեց,
Կայծով լիքը
Կայծոռիկը՝
Նավթով լըցրեց
Իր լամպիկը,
բեղուն
մեղուն

Խայթը սըրեց,
Իսկ բըզեզը՝
Իր կոշտ մեջքը
Փայլեցըրեց:
— Բա մոծակը.
Նա էլ գըտավ
Իր դերձակը,
Որ կարկատած
Թևովն իրա
Ետ չըմընա,
Հանդեսին գա:

Դաշտ ու այգի
Զարդարվեցին
ծաղիկներով,
կանաչով.
Փետ ու սոռ
Վարարեցին

Ու վազեցին

Կարկաչով:

Օգբ թընդաց

Մանուկների

Անուշ երգով

Կանչերով.

— Գարունն եկավ,

Գարունն եկավ

Սեգ սարերի

Լանջերով:

Հէյ, գարուն է,

Գարուն,

Զան, գարուն

Սիրուն...

1927

Պ Ս Տ Ի Կ Պ Ո Ւ Մ

(Մայիսյան)

Մաստիկ շող էր ցերեկով,
Ու երբ եկավ երեկոն,
Հորդ անձրեկը շափշափեց,
Առատ ջուրը ցած թափեց,
Ջուրը հորդեց անըսպառ,
Հեղեղեց դաշտ ու անտառ:

Էսպես էլ թաց եղանակ,
Էս հեղեղի ժամանակ,
Տեղ չըմընաց էլ ցամաք.
Յամաք մընաց մեն մի տեղ
Անտառուժը—սունկի տակ.
Սունկը ծածկել մեծ գըղակ՝
Լայնեղերք ու բոլորակ՝
Թագ էր կացել ծառի տակ:

Գորտուկները հրըճըվում,
Ջուրը մըտնում, կըռկըռում,
Կանչում էին, հըռհըռում—

— Էսպես էլ լավ եղանակ,
Չըկար քանի ժամանակ:

Էդ միջոցին մի մըրջուն՝
Հազիվ-հազիվ սողալով՝
Շուկայից էր գալիս տուն,
Յուրտ անձրեվից դողալով:

Սունկը տեսալ,

Ուրախացալ,

Սունկին հասալ

Էսպես ասալ:

— Էստեղ նըստեմ, շունչ քաշեմ,
Հանգըստանամ, քիչ սպասեմ,
Գուցե անձրեվն էլ անցնի,
Արեվն ուղիս չորացնի,
Զամբյուղս առնեմ, տունս գընամ,
Մըթին դուրսը չըմընամ:

Մեր գորտը թե՛

— Մըրջուն,

Գուրիկ իմ շըրջուն,

Չուր ես,

Իզուր տըրտընջում:

— Էսպես էլ լավ եղանակ

Չըկար երկար ժամանակ:

Մըրջնիկը թե՛

— Ա՛յ, գորտ քեռի, երաժիշտ,

Չըրի միջին դու հանգիստ

Հըռհըռում ես, կըռկըռում

Նոր-նոր երգեր հորինում,
Գու իմ հալին մըտիկ տունը—
Ձուր կըտրեցի էստեղ, ջուր:

Էդ բոպերն խոտերից—
Չըզիտես թե ո՞րտեղից
Ծըղրիդը լավ հագընված,
Ձութակն առած թեվի տակ,
Սունկի առջեվ հայտընվեց.
— Թույլ տունը, մըրջնիկ, միայնակ
Մի շունչ առնեմ սունկի տակ,
Չուշանամ մեր համերգին,
Խոսք եմ տըվել ամենքին—
Սպասում են իմ նըրվագին:

Մըրջնիկը թե՛
— Համեցեք, իմ բարեկամ,
Մեկտեղ լինենք էս անգամ,
Գուցե անձրեփն անց կենա,
Գիշերն էստեղ չըմընանք:

Անձրեվը չէր դադարում,
Ընդհակառակ՝ վարարում,
Ձուրն էր հոսում անընդհատ,
Մութն էր ընկնում աննըկատ:
Ծըղրիդը թե՛
— Ս-ս-ս, խոտերն են խըշխըշում

Մըրջնիկ քուրիկ, չէս լըսում.
— Ո՞վ է գալիս, ձայն տուր, ձայն,
— Ես, բըգեղըս մայիսյան,
Մըթնում ճամբից շեղվեցի,
Լավ է ձեզ հանգիպեցի:
— Համեցեք, իմ հորեղբայր,
Էս ինչ լավ էր, որ եկար,
Մութն է ընկնում անտառում,
Ո՞վ է ճամբեն իր ճարում:

Բըգեղը թե՛

— Մի նայե՛ք,
Ով է գալիս ճըրագով,
Լուսապայծառ կըրակով:

Բոլորը թե՛

— Բարե՛վ, բարե՛վ,
Մեր կայծոռիկ,
Արի մեզ մոտ,
Արի մոտիկ:
Բարե՛վ, բարե՛վ
Լուսատըտիկ,
Արի մեզ մոտ,
Էստեղ տիաիկ:
Կայծոռիկը՝
— Էս ինչ լավ է սունկի տակ,
Ինչ հանգիստ է. ընդարձակ.
Էստեղ մերոնց շըրջանում,
Մնձրե՛վն էլ չի խանգարում:

Մըզրիդ, զըլիը շուժակըդ,
Բըզեզ, հանլը գըզակըդ,
էս անձըեվին, էս թոնին
Ուրախանանք լիովին:

Ու անտառում, սունկի տակ
Հընչեց պարի եղանակ:

— Պար,

— Պար,

— Պարբաշի,

Դեհ մըրջնիկին

Մեջ քաշի,

— Բըզեզ,

Թըռի

Վեր-վերի՝

Պարի

Բըզեզավարի,

— Կայծով լիք,

Իմ կայծոռիկ,

Պարի նազով

Շորորի,

Վառ լապտերդ օրորի,

Լույս տուր մերոնց բողբոլին:

Հընչեց երգ ու եղանակ,

էսպես երկար ժամանակ,

Թոնը կըտրեց, անց կացավ,

Մուլթը գեանից վեր կացավ.

Արեֆն ելավ, արեվեց
Շող ու շաղով բարեվեց:
Ճամբա, կածան
Զորացան,
Ծառ ու ծաղիկ
Թարմացան:
Ճամբորդները սունկի տակ
Խորը քընից վեր կացան.
Ու ցըրվեցին զըվարթուն
Ամեն մեկը իրանց տուն:

1939

ՃՊՈՒՌՆ ՈՒ ԲԶԵԶԸ

(Ռուսական ժողովրդական հեքյաթ)

Պարնան մի օր, պայծառ մի օր,
Նոր շունչ առած աշխարհն արար՝
Զարդարել էր շուրջը բոլոր
Ծաղիկներով դառ ու գոհար:

Էդ եղանակն
էնպես հուզեց,

Աղբաբըզեզն
անգամ ուզեց

Իր գույգ թեւը
լայն տարածել,

Թըռչել

շըրջել

շուրջն աչք ածել:

Էդ միջոցին

պուշք ցեց՝

ձրպուռն եկավ

գիւտացից:

Բըզեզը թե՛

— Այ, ճպուռիկ,

Իմ քուրիկ,

Թըռի-վըռի

Սիրունիկ,

Ասա, տեսնեմ, էս ամառ

Տեղ արե՞լ ես քեզ համար:

— Այո, մարգում էն դեղին,

Ծանոթ չե՞ս դու էդ տեղին,

Ծաղիկներին,

Նըրանց հոտին՝

Խատուտիկին,

Ընձախոտին,

Նըրա փայլուն ծաղկաթերին,

Որ նայում է միշտ եթերին,

Հայելու պես նա միշտ ցոլում,

Պատկերը է արտացոլում,

Ինձ համար են նըրանք փըթթում:

Էնտեղ ամեն, ամեն թըփում

Ունեմ հարմար ես օթեվան,

Թե կուզես, եկ ինձ հարեվան:

— Որ էդպես է, այ քուրիկ,

Թըռի-վըռի ճըպուռիկ,

Կըթըռչեմ, քեզ հյուր կըգամ,

Մի քիչ քեզ մոտ կըմընամ:

Բըզեզն ասավ

Ու պատրաստվեց,

Բայց թե սովոր
Դանդաղության,

Մըլուլ արեց
բըզ՛գաց,

բըզ՛գեց,

Մեկ էլ, մի օր
ճախրել ուղեց,

Բակը թողած
թըռավ զընաց՝

Թըռավ երկար...
Բայց թե դեղին

Մարգագետինն հւր էր,
Զրկար:

Երբ հանդիպեց
Ճըպուռիկին՝

Դանգատ արեց
Իր քուրիկին:

— Մի նեղանար,
Բըզեզ եղբայր,

Ժամանակին
Դու հյուր չեկար:

Մարգագետինն էս մեր դեղին,
Սպիտակել է ամբողջովին:

Նա ծածկվել է կաթնախտով,
Կաթնախտի քընքուշ հոտով,

Պես-պես սպիտակ մանրածաղկով,
Նրիցուկով, շողավարդով:

— Բավական է, իմ բուրիկ,
էլ մի պատմի, ճշպուռիկ,
Քեզ հյուր կըգամ, կըմընամ,
Ծաղկանց հոտով թարմանամ:

Բայց թե սովոր
Դանդաղության,

Մըլուլ արեց

բըզ՛զ՛աց,

բըզ՛զ՛եց,

Մեկ էլ, մի օր

ճախրել ուզեց,

Բակը թողած

թըռավ գընաց՝

Թըռավ երկար...

Բայց թե սպիտակ

Մարգագետինն ուր էր

Չըկար:

Երբ հանդիպեց

Ճշպուռիկին՝

Գանգատ արեց

Իր բուրիկին:

— Մի վըշտանար,

Բըզեզ եղբայր,

Ժամանակին

Դու հյուր չեկար:

Մարգագետինն էլ չի սպիտակ,
Հագել է նա բաց կապուտակ:
Անգակ-գանգակ ծաղկունքով,
Կապույտ-կապույտ աչք-ունքով,
Իսկ խորդենին նըրանց քով
Իր անուշիկ նազանքով.
Այրեծաղկով՝ խատուտող,
Բեղիկներով պըտըտվող,

Նա կառչում է

Իր բեղիկով

Խոտին, թփին,

Նըրանց ներքո

Օրորվում է

Իր թեվիկով,

Կարծես նիրհում

Նըրանց երգով:

— Էհ, թող նիրհի

Եվ օրորվի,

Օրորվելով

Նա մոլորվի,

Ես էլ քեզ մոտ եկողը չեմ,

Թեկուզ մարզը դառնա եղեմ:

Թեկուզ ծաղկեն ամեն տեսակ

Վարդ ու ծաղիկ իմ չըտեսած:

Ասեմ միտքը

էս ոուսական

Հեքյաթի.—

Ով ծուլանա ու դանդաղի,
Գործը չանի ժամանակին,
Ամեն բանում նա կըկազի
Ու չի հասնի նըպատակին:

PROBATION REPORT

1. Name of the Probationer: ...

2. Date of Birth: ...

3. Date of Admission to Probation: ...

4. Name of the Probation Officer: ...

5. Name of the Probation Officer in Charge: ...

6. Name of the Probation Officer who prepared this report: ...



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	Էջ
1. Ա յ դ	5
2. Հայրենի կտուրի տակ	13
3. Առաջին ծաղիկներ	25
4. Խաղ ու երգ	39
5. Զանազան	53
6. Պատիկ պոեմներ ու հեքյաթներ	59

შ ი ნ ა ა რ ს ი

1. ცისკარი	5
2. მშობლიურ ბანკებში	13
3. პირველი ყვავილები	25
4. სიმღერა და თამაში	59
5. სხვა და სხვა	53
6. პატარა პოემები და ზღაპრები	59



0 4 2 6 3 0 7

Շապիկը և նկարագրողումը՝ նկարիչ Ա.ՐԱՄ ԿՈՋՈՅԱՆԻ

Ստորագրված է տպագրության 1949 թ. ապրիլի 25-ին:

Տիրաժ՝ 4000: Շարվածքը՝ $5\frac{1}{2} \times 8\frac{1}{2}$: Գատիեր № 482: ՈՒԷ՝ 02318:

«Զարյա Վոստոկայե» Ա. Ֆ. Մյաննիկյանի անվճ տպարան
Թբիլիսի, Ռուսթավելու պող. № 42:

ԳԱՍ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0622291

[404]

ԳԻՆԸ 4 ՌՈՒԲԼԻ

Կու
114



ՐՄԵՆ ԱԳԱԲԱԲ

«ՅԱՐՅԱ»

Избранные стихотворения
(на армянском языке)

Тбилиси
«С а б л и т г а м и»
1948